# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» նոյեմբերի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Նիստից բացակայում էր՝

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2023թ.-ի նոյեմբերի 01-ին՝ ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 13 335 680 |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| **Մասնակցի անվանումը (անունը)** | **Մասնակցի գործունեության հասցեն** |
|---|---|
| «Հատ Հատ Շին» ՍՊԸ | ԱՐԱՐԱՏ, ԱՎՇԱՐ, ԱՐԹՈՒՐԻ Փ., Տ 30 |
| «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Ք. Ստեփանավան Չարենցի 13 |
| «Հոսիկար շին» ՍՊԸ | ՇԻՐԱԿ ՊԵՄԶԱՇԵՆ ՊԵՄԶԱՇԵՆ 2 Փ. 1 ՓԿՂ. 2 |
| ԱՁ Վարդան Ալեքսանյան | ք. Երևան, Չեխովի 8/1, բն. 56 |
| «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ | Վայոց Ձորի մ., գ. Զառիթափ |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. նոյեմբերի 02-ին՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Արմեն Ավետիսյան

Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«02» նոյեմբերի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Նիստից բացակայում էր՝

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

### 1. Տեղեկատվություն՝ «Հատ Հատ Շին» ՍՊԸ-ի հայտի մերժման վերաբերյալ.

«Հատ Հատ Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 01.11.2023թ., ներառված է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 23.12.2022թ.-ից մինչև 23.12.2024թ. ժամկետով, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Հատ Հատ Շին» ՍՊԸ-ի հայտը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.**

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.18-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Այս կապակցությամբ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջացել «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1), գնային առաջարկի (Հավելված 2), pdf ձևաչափով ներկայացված ծավալաթերթի (ծավալաթերթ-նախահաշվի) (Հավելված 2.1) էլեկտրոնային թվային ստորագրությունների վավերականության վերաբերյալ ստանալ տվյալ ոլորտը կարգավորող մարմնի՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ի դիրքորոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1), գնային առաջարկի (Հավելված 2), pdf ձևաչափով ներկայացված ծավալաթերթի (ծավալաթերթ-նախահաշվի) (Հավելված 2.1) էլեկտրոնային թվային ստորագրությունների վավերականության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով դիմել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին,
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից համապատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ __________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

__________ Արմեն Ավետիսյան

__________ Տիգրան Ջեյնալյան

__________ Անդրանիկ Աբգարյան

__________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ __________ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«06» նոյեմբերի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Չեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Նիստից բացակայում էր՝

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**1.** Գնահատող հանձնաժողովի 02.11.2023թ. նիստի N 3 արձանագրության 2-րդ կետում նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին ուղղված 02.11.2023թ. N ԴԴ-3-Ե-7772 գրությանը (կցվում է) ի պատասխան «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից 2023 թվականի նոյեմբերի 03-ին ստացվել է հ. 3643 գրությունը (կցվում է):

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

2.1. «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1), գնային առաջարկը (Հավելված 2): Հայտում բացակայում է հրավերով պահանջվող՝ «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հավելված 2.1:

2.2. «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Հայտում առկա լիցենզիան և լիցենզիայի ներդիրները գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել, քանի որ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով չի նախատեսվել լիցենզիա/ներդիր ներկայացնելու պահանջ:

2.3. Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.4. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) առկա է և pdf և excel ձևաչափով):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.1. «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության մեջ նշված՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է՝ նշված հղմամբ հնարավոր չէ տեսնել հրապարակված հայտարարագիրը,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**3.2. «Հոսիկար շին» ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով հիշյալ անձը լիազորվել է էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրել «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից մասնակցվող բոլոր մրցույթների հայտերի հավելվածներում և կից փաստաթղթերում, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ գնանշման հարցման ընթացակարգով, ինչպես նաև լիազորված անձի տվյալներում նշված չէ անձնագրի սերիան, անձնագրի համարի թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ Կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին:

**3.3. ԱՁ Վարդան Ալեքսանյան**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում հարկ վճարողի հաշվառման համարը դաշտում լրացված ութանիշ թիվը չի համապատասխանում www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի «Հայտեր» բաժնում մասնակցի մասով «ՀՎՀՀ» սյունակում նշված ութանիշ թվին,
  - դիմում-հայտարարության չորրորդ նախադասության սկզբում և 1)-ին կետում մասնակցի անվանումը լրացված է առանց «ԱՁ» նշման,
- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ «II. Ջրամատակարարում» բաժնի համար հաշվարկվող կշռի շեղումը չի համապատասխանում հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 4)-րդ ենթակետով և ՄԱՍ II-ի 2.6-րդ կետով սահմանված պայմաններին,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**3.4. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ**

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից ստացված 03.11.2023թ. հ. 3643 գրության համաձայն՝ «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի փաստաթղթերը՝ դիմում հայտարարությունը (Հավելված 1), գնային առաջարկը (Հավելված 2) և Հավելված 2.1, չեն պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություն:

Հաշվի առնելով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից ստացված գրությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերի պահանջները, հանձնաժողովը որոշեց «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4. Մասնակիցների առաջարկած գներն են.**

*ՀՀ դրամ*

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Հատ Հատ Շին» ՍՊԸ | | | «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | | «Հոսիկար շին» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 10 540 000 | 2 110 400 | **12 650 400** | 10 350 000 | 2 070 000 | **12 420 000** | 8 549 000 | 1 709 800 | **10 258 800** |

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | ԱՁ Վարդան Ալեքսանյան | | | «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 12 893 436 | - | **12 893 436** | 10 731 500 | 2 146 300 | **12 877 800** |

5. **Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. նոյեմբերի 08-ին, ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.9-րդ կետի պահանջներով՝ **«ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Հոսիկար շին» ՍՊԸ-ի, Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **նոյեմբերի 07-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

______________ Արմեն Ավետիսյան

______________ Տիգրան Չեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Արուս Խաչատրյան

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511 820,* www.court.am


**№ ԴԴ-3-Ե-** 7772

**« 02 » նոյեմբերի 2023թ.**

**«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՈՆԻԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ պարոն Ավետիսյան,*

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս կապակցությամբ՝ կից ներկայացնում եմ Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), գնային առաջարկը (Հավելված 2), ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) և խնդրում հնարավորինս սեղմ ժամկետում տալ կարծիք՝ նշված փաստաթղթերում դրված էլեկտրոնային թվային ստորագրությունների հիշյալ նորմով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Առդիր՝ 3 ֆայլ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**


*Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն, Գնումների համակարգման բաժին*
*Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788*

**Հավելված 1**
**«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնանշման հարցմանը մասնակցելու**

<<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի
չափաբաժնի համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

<<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

ՀՀ ռեզիդենտ:
երկրի անվանումը

<<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 08911644.
  հարկ վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mavshin@gmail.com .
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ Վայոց Ձորի մ., գ. Զառիթափ .
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ 077929394 .
  հեռախոսի համարը

Սույնով <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանումը

1) <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանումը

բավարարում են «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանումը

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում

2) «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ին
  մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _<<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ի իրական շահառուների

մասնակցի անվանումը

վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ E-register.am
**

___________________________________________ ___________________________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

SARGSYAN HOVSEP 1112900764

Digitally signed by SARGSYAN HOVSEP 1112900764
Date: 2023.10.27 14:10:50 +04'00'

**Հավելված 2**
**«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը<<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ -ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գնով.

ՀՀ դրամ

| **Չափա-բաժնի համարը** | **Աշխատանքի անվանումը** | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/** | **ԱԱՀ** /տառերով և թվերով/** | **Ընդհանուր գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | **Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/** | 10731500 Տաս միլլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր | 2146300 Երկու միլլիոն հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր | 12877800 Տասներկու միլլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր |

_______________________________________________     ______________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)     ստորագրությունը

Կ. Տ.

SARGSYAN HOVSEP 1112900764

Digitally signed by SARGSYAN HOVSEP 1112900764
Date: 2023.10.26 16:44:47 +04'00'

Հավելված 2.1
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

**Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ**

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ (ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ)

$Գ_{աշխ}$=1,948.57
$Գ_{մեք}$=2,370.15

| Հ/հ | Հիմնավորում | Աշխատանքների անվանում | Չափման միավոր | Ծավալ | Միավորի արժեք* /ՀՀ դրամ/ | Ընդհանուր արժեք /ՀՀ դրամ/ | Կշիռ (%)** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **I. Շինարարական աշխատանքներ** | | | | | | | |
| **Առաջին հարկ** | | | | | | | |
| **1. Քանդման աշխատանքներ** | | | | | | | |
| 1 | E46-109 | Կերամոգրանիտե հատակների քանդում | $մ^2$ | 293,6 | 700,00 | 205520,00 | |
| 2 | E46-119 E46-120 | Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ | $մ^2$ | 293,6 | 500,00 | 146800,00 | |
| 3 | p5-41 | Կերամոգրանիտե շրիշակների քանդում | գմ | 191,7 | 200,00 | 38340,00 | |
| 4 | C310-5 տ.մ.կ 29 | Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչև 5կմ | տ | 35,6 | 5500,00 | 195800,00 | |
| **Ընդամենը** | | | | | | 586460,00 | |
| **2. Կառուցողական աշխատանքներ** | | | | | | | |
| 1 | E11-55 E11-56 | Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ | $մ^2$ | 293,6 | 5000,00 | 1468000,00 | |
| 2 | E11-135 | Կերամոգրանիտե 50x50 սալերով հատակների իրականացում | $մ^2$ | 293,6 | 10400,00 | 3053440,00 | |
| 3 | E11-252 | Կերամոգրանիտե շրիշակների իրականացում 8սմ բարձրությամբ | գմ | 191,7 | 3250,00 | 623025,00 | |
| **Ընդամենը** | | | | | | 5144465,00 | |
| **Երկրորդ հարկ** | | | | | | | |
| **3. Քանդման աշխատանքներ** | | | | | | | |
| 1 | E46-109 | Կերամոգրանիտե հատակների քանդում | $մ^2$ | 183,9 | 700,00 | 128730,00 | |
| 2 | E46-119 E46-120 | Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ | $մ^2$ | 183,9 | 500,00 | 91950,00 | |
| 3 | p5-41 | Կերամոգրանիտե շրիշակների քանդում | գմ | 98,1 | 200,00 | 19620,00 | |
| 4 | C310-5 տ.մ.կ 29 | Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչև 5կմ | տ | 22,3 | 5500,00 | 122650,00 | |
| **Ընդամենը** | | | | | | 362950,00 | |
| **4. Կառուցողական աշխատանքներ** | | | | | | | |
| 1 | E11-55 E11-56 | Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ | $մ^2$ | 183,9 | 5000,00 | 919500,00 | |
| 2 | E11-135 | Կերամոգրանիտե 50x50 սալերով հատակների իրականացում | $մ^2$ | 183,9 | 10400,00 | 1912560,00 | |
| 3 | E11-252 | Կերամոգրանիտե շրիշակների իրականացում 8սմ բարձրությամբ | գմ | 98,1 | 3250,00 | 318825,00 | |
| **Ընդամենը** | | | | | | 3150885,00 | |
| **Ընդհանուր՝ 1-4** | | | | | | 9244760,00 | 89,66 |
| **II. Ջրամատակարարում** | | | | | | | |
| **1. Հողային աշխատանքներ** | | | | | | | |
| 1 | E27-36 | Բազալտե եզրաքարերի քանդում | գմ | 3,0 | 500,00 | 1500,00 | |
| 2 | E46-109 | Բազալտե սալերի քանդում | $մ^2$ | 1,2 | 500,00 | 600,00 | |
| 3 | E46-99 | Բետոնե սալվածքի քանդում | $մ^3$ | 1,5 | 500,00 | 750,00 | |
| 4 | E1-962 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | $մ^3$ | 20,5 | 4500,00 | 92250,00 | |
| 5 | E23-1 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում, h=10սմ հաստությամբ | $մ^3$ | 1,3 | 12000,00 | 15600,00 | |
| 6 | E23-2 կիր. | Ավազե պաշտպանիչ շերտի իրականացում | $մ^3$ | 4,0 | 12000,00 | 48000,00 | |

| Հ/հ | Հիմնավորում | Աշխատանքների անվանում | Չափման միավոր | Ծավալ | Միավորի արժեք* /ՀՀ դրամ/ | Ընդհանուր արժեք /ՀՀ դրամ/ | Կշիռ (%)** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 7 | E1-970 E1-1184 | Խրամուղու եռլիցք կողալիցքի մշակված գրունտներից ձեռքով տոփանումով | մ$^3$ | 15,3 | 3000,00 | 45900,00 | |
| 8 | E15-77 | Բազալտե սալիկների իրականացում 40մմ հաստ. | մ$^2$ | 1,2 | 7500,00 | 9000,00 | |
| 9 | E6-1 կիր. | Բետոնե սալվածքի իրականացում B15 դասի բետոնով, h=10սմ հաստությամբ | մ$^3$ | 1,5 | 45000,00 | 67500,00 | |
| 10 | E27-87 | Քանդած բազալտե եզրաքարերի վերատեղադրում բետոնե հիմքով | գմ | 3,0 | 1000,00 | 3000,00 | |
| 11 | P23-249 | Շին. աղբի և ավելորդ գրունտի տեղափոխում ձեռքով մինչև 50մ | տ | 14,0 | 8000,00 | 112000,00 | |
| 12 | C310-5 տ.մ.կ 29 | Շին. աղբի և ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչև 5կմ | տ | 14,0 | 5500,00 | 77000,00 | |
| 13 | E46-53 | Անցքի շաղափում հիմքում D=150մմ | հատ | 1 | 1500,00 | 1500,00 | |
| 14 | E46-53 | Անցքի շաղափում հատակում D=150մմ | հատ | 1 | 1500,00 | 1500,00 | |
| Ընդամենը | | | | | | 476100,00 | |
| | | **2. Տեխնոլոգիական աշխատանքներ** | | | | | |
| 1 | E-22-118 | Պոլիէթիլենային (PE) եռակցվող խողովակների մոնտաժում de63, PN=1.0ՄՊա փորձարկումով | գմ | 18,4 | 4000,00 | 73600,00 | |
| 2 | E22-64 | DN57x3.5 պողպատե (St) էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով | գմ | 19,7 | 3000,00 | 59100,00 | |
| 3 | E22-312 | Խողովակաշարի լվացում ախտահանումով | կմ | 0,0381 | 20000,00 | 762,00 | |
| 4 | E22-365 | de63 a=90΄ պոլիէթիլենե արմունկի մոնտաժում | հատ | 3 | 2500,00 | 7500,00 | |
| 5 | E22-429 | Պողպատե (St) էլ. եռակցվող կցաշուրթ DN50 | հատ | 2 | 2000,00 | 4000,00 | |
| 6 | E22-365 | Պոլիէթիլենե (PE) միջադիր de63 | հատ | 1 | 1500,00 | 1500,00 | |
| 7 | E22-362 | de50 պողպատե խողովակի ձևավոր մասերի մոնտաժում | կգ | 6,6 | 5000,00 | 33000,00 | |
| 8 | E15-614 | Պողպատե խողովակների և ձևավոր մասերի ներկում 2 շերտ | մ$^2$ | 3,8 | 1500,00 | 5700,00 | |
| Ընդամենը | | | | | | 185162,00 | |
| | | **Ջրաչափական հոր** | | | | | |
| | | **3. Հողային աշխատանքներ** | | | | | |
| 1 | E1-962 | Փոսորակի մշակում IV կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ$^3$ | 23,5 | 4500,00 | 105750,00 | |
| 2 | E1-970 E1-1184 | Փոսորակի եռլիցք կողալիցքի մշակված գրունտներից ձեռքով տոփանումով | մ$^3$ | 21,0 | 3000,00 | 63000,00 | |
| 3 | P23-249 | Ավելորդ գրունտի տեղափոխում ձեռքով մինչև 50մ | տ | 5,0 | 8000,00 | 40000,00 | |
| 4 | C310-5 տ.մ.կ 29 | Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 5 կմ | տ | 5,0 | 5500,00 | 27500,00 | |
| Ընդամենը | | | | | | 236250,00 | |
| | | **4. Տեխնոլոգիական աշխատանքներ** | | | | | |
| 1 | E22-64 | DN48x3.5 պողպատե (St) էլ, եռակցվող խողովակների մոնտաժում փորձարկումով | գմ | 1,5 | 2500,00 | 3750,00 | |
| 2 | E22-312 | Խողովակաշարի լվացում ախտահանումով | կմ | 0,0015 | 20000,00 | 30,00 | |
| 3 | E16-53 | D=48x3.5մմ պողպատե էլ. եռակցվող խողովակակտոր երկկողմանի արտաքին պարուրակով (L=0.3մ), փորձարկումով, 4 հատ | գմ | 1,2 | 3500,00 | 4200,00 | |
| 4 | P19-12 | Ջրաչափի ապամոնտաժում | հատ | 1 | 1000,00 | 1000,00 | |
| 5 | 12-811-2 | DN40 գնդային փականի մոնտաժում | հատ | 1 | 500,00 | 500,00 | |
| 6 | E16-135 | DN40 ջրի ֆիլտրի մոնտաժում | հատ | 1 | 500,00 | 500,00 | |
| 7 | E16-295 | Ապամոնտաժված ջրաչափի մոնտաժում | հատ | 1 | 1500,00 | 1500,00 | |
| 8 | E22-429 | Պողպատե (St) էլ. եռակցվող կցաշուրթ DN50 | հատ | 2 | 2000,00 | 4000,00 | |
| 9 | E22-365 | Պոլիէթիլենե (PE) միջադիր de63 | հատ | 1 | 1500,00 | 1500,00 | |
| 10 | E22-362 | Պողպատե խողովակի ձևավոր մասերի մոնտաժում | կգ | 1,2 | 5000,00 | 6000,00 | |
| 11 | E15-614 | Պողպատե խողովակների և ձևավոր մասերի ներկում 2 շերտ | մ$^2$ | 0,6 | 1500,00 | 900,00 | |
| Ընդամենը | | | | | | 23880,00 | |
| | | **5. Ե/Բ կլոր հոր, D=1.5մ, H=1.8մ** | | | | | |

| Հ/հ | Հիմնավորում | Աշխատանքների անվանում | Չափման միավոր | Ծավալ | Միավորի արժեք* /ՀՀ դրամ/ | Ընդհանուր արժեք /ՀՀ դրամ/ | Կշիռ (%)** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | E6-1 | Նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից | մ³ | 0,45 | 35000,00 | 15750,00 | |
| 2 | E7-352 | D=1,5մ տրամագծով ե/բ հորի հատակի սալի տեղադրում ՀՍ-15 տիպի (1 հատի համար բետոն - 0.38մ3, ամրանագանց - 32,7կգ) | մ³ | 0,38 | 80000,00 | 30400,00 | |
| 3 | E7-340 | D=1.5մ տրամագծով ե/բ հորի պատի օղակի տեղադրում ՊՕ-15-9 տիպի (1 հատի համար բետոն – 0.4մ3, ամրանագանց - 10,7կգ) | մ³ | 0,8 | 100000,00 | 80000,00 | |
| 4 | E7-352 | Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ԾՍ1- 15 տիպի (1 հատի համար բետոն 0.27մ3, ամրանագանց - 26,7կգ) | մ³ | 0,27 | 120000,00 | 32400,00 | |
| 5 | E7-291 | Պողպատե միացնող էլեմենտներ | տ | 0,0185 | 150000,00 | 2775,00 | |
| 6 | E9-46 | Մետաղական աստիճան | տ | 0,0185 | 250000,00 | 4625,00 | |
| 7 | E15-614 | Պողպատե խողովակների և ձևավոր մասերի ներկում 2 շերտ | մ² | 1,1 | 1664,00 | 1830,40 | |
| 8 | E23-157 | Թուջե մտոցի տեղադրում | հատ | 1 | 85000,00 | 85000,00 | |
| **Ընդամենը** | | | | | | 252780,40 | |
| **Ընդհանուր՝ 1-5** | | | | | | 1174172,40 | 10,34 |
| **Ընդամենը՝ I-II** | | | | | | 10418932,40 | 100,00 |
| *Չնախատեսված ծախսեր 3%* | | | | | | 312567,97 | |
| **Ընդամենը** | | | | | | 10731500 | |
| *ԱԱՀ (20%)* | | | | | | 2146300 | |
| **Ընդամենը** | | | | | | 12877800 | |

SARGSYAN HOVSEP 1112900764

Digitally signed by SARGSYAN HOVSEP 1112900764
Date: 2023.10.26 16:55:37 +04'00'

9059

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

հ. 3643
03.11.2023թ.

**Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի**
**Դատական դեպարտամենտի**
**ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ**
**Արշակ Վարդապետյանին**

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ԴԴ-3-Ե-7772 հարցման՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված ՄԱՎՇԻՆ ՍՊԸ-ի փաստաթղթերը՝ դիմում հայտարարությունը (Հավելված 1), գնային առաջարկը (Հավելված 2) և Հավելված 2"1, չեն պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություն:

Տեղեկացնում ենք նաև, որ _PDF ձևաչափով փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրության ստուգումը կարող եք կատարել կայքում տեղադրված հետևյալ գործիքի միջոցով՝ https://ekeng.am/hy/sec_sub/sign_check

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

Recoverable Signature

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049

Ն 16361
03.11.23թ

Ծրագրերի կառավարման բաժին
+374 60 464 501 (204)

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«08» նոյեմբերի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Ջեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Նիստից բացակայում էր՝

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Հոսիկար շին» ՍՊԸ-ի, Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.**

1.1. «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված 1), որի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ այն կազմված չէ իրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության մեջ նշված՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է՝ նշված հղմամբ հնարավոր չէ տեսնել հրապարակված հայտարարագիրը: «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իրավերով պահանջվող՝ «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հավելված 2.1:

«ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետի ավարտից հետո «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

1.2. «Հոսիկար շին» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

1.3. Վարդան Ալեքսանյան ԱՁ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետի ավարտից հետո Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել:

**Հանձնաժողովը որոշեց.**

- «Հոսիկար շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար,
- «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.**

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց **ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «Հոսիկար շին» ՍՊԸ-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ____________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

____________ Արմեն Ավետիսյան

____________ Տիգրան Ջեյնալյան

____________ Անդրանիկ Աբգարյան

____________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ____________ Արուս Խաչատրյան

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 5 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/:

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Անհամապատասխանության համառոտ նկարագրություն** |
|---|---|---|---|---|
| 1 | «Հատ Հատ Շին» ՍՊԸ | | X | «Հատ Հատ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը: |
| 2 | «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | X | «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով: |
| 3 | «Հոսիկար շին» ՍՊԸ | X | | |
| 4 | ԱՁ Վարդան Ալեքսանյան | | X | Վարդան Ալեքսանյան ԱՁ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով: |
| 5 | «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ | | X | «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերի պահանջները: |

| **Մասնակիցների զբաղեցրած տեղերը** | **Մասնակցի անվանումը** | **Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/ | **Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|
| 1 | «Հոսիկար շին» ՍՊԸ | X | 8 549 000 |
| - | «ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 10 350 000 |
| - | «Հատ Հատ Շին» ՍՊԸ | | 10 540 000 |
| - | «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ | | 10 731 500 |
| - | ԱՁ Վարդան Ալեքսանյան | | 12 893 436 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**